

Նայէր այս երեք անձանց մոլեգին գնացքին եւ, որու հասնիլ կարելի չէր եւ վտանգաւոր էր: Բայց չի թողուց բոլորովին մեր հայոց հետքը: Սուրեն սրատես եւ սրամիտ, երբ տեսաւ, որ արաբը հեռուանց իրենց կը հետեւեր, վայրկեան մը ուշացուց ընթացքը եւ ըսաւ ընկերաց:

– Տղա՛ք, մեր առաջը հաւանական թէ թշնամեաց ուրիշ խումբ մը կայ, վասնզի այս անգամներն անօգուտ մեր ետեւէն չէին գար: Մի՛ թուլանաք, քաջ եղի՛ք: Աստուծով՝ լաւ սկսանք, լաւ կը վերջացնենք:

Շատ չանցաւ, ակելի բազմաթիւ խումբ մը երեւցաւ, Սուրեն նոյն առաջին գործողութիւնն ըրաւ, խոտորեցաւ արահետէն եւ սկսաւ բացուիլ, քանի որ հեռու էին թշնամիք. նոյնպէս այս արաբք սկսան ճապաղիլ, որպէսզի սոցայ ճամփան արգիլեն, եւ այս անգամ, տեսաւ Սուրեն, որ ակելի դժուար էր գործը, վասնզի հսկայ արար մը ահագին նիզակ ճեռին իւր վրայ կը դիմեր, առանց շփոթելու ուղղեց նժոյգը նորա դէմ, եւ երբ նա նիզակն իրեն կը շեշտեր՝ մտրակ մը տուաւ ձիուն, հարուածը վահանին վրայէն սահեցուց եւ նիզակը աւազին մէջ մղելով սուրբ հսկային վրայ փայլեցուց: Սա վահանաւ ուզեց արգիլել հարուածը, բայց այնպէս էր Սուրենի արագութիւնը, որ գլխուն կէսը կտրեց, եւ հսկան գետին գլորեցաւ: Գրիգոր նոյն միջոցին կը կաւեր կատաղի մարդու մը հետ, որ երկու տեղէն վիրաւորուած՝ արիւնլուայ նիզակի տկար հարուած մը միայն կրցաւ տալ Գրիգորի ձիուն, եւ այդ անսման կենդանին այնպէս զայրացուց, որ կատաղի ընթացք մը առաւ եւ Գրիգոր այդ պատերազմէն դուրս գտաւ ինքզինքը եւ Եփրատի ափանց վրայ: Սուրեն տեսնելով նորա անհետանալը, տեսնելով եւ Գագրիկ երկու թշնամեաց մէջ առաջէն ու ետէն զինք շամփրել կը ջանային իրենց նիզակներով եւ կորովի շինականր, որ առջեւինին դէմ իւր վահանը բռնած դիպող առթի կը նայէր մուրճը իջեցնելու, յարձակեցաւ եւ ետեւին սպառնացող վտանգէն ազատեց նիզակի հարուածով մը, ճիշտ նոյն րոպէին, երբ Գագրիկ նաեւ դիմացինին գլուխը ջախջախելով ձի են վար կը գլորեր:

Բայց մեր կորովի զինուորները վտանգէն չէին ազատած. երկու քաջաձի նիզակաւորք կը մօտենային. իսկ Սուրեն պատրաստուելով սոցայ դէմ հարձկելու, ըսաւ Գագրիկի՝ «Դու զիս թո՛ղ, գնա՛յ սա ուղղութեամբ հասիր Գրիգորի, նա Եփրատի ափունքը գտած պէտք է լինի: Ես եթէ ձեզ հասայ քանի մը վայրկեանէ՝ լաւ, եթէ ոչ անցէք գետը, Յայաստան կը տեսնվինք, քաջ եղի՛ք, մի՛ յուսահատիք, հայոց աստուածը մե՞ծ է»: